**Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր N ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-25/193-5-Հ2**

# 23.12.2025Թ. ԿՆՔՎԱԾ ԹԻՎ ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-25/193-5 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «19» «06» 2026թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Հասմիկ Հակոբյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԲԻ ԹՈՒ ՋԻ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Նարեկ Սարգսյանի (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 2025թ դեկտեմբերի 23-ին կնքված N ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-25/193-5 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.8 կետերը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Ելնելով անհրաժեշտությունից Կողմերը, փոխադարձ համաձայնությամբ, որոշեցին Պայմանագրում կատարել փոփոխություն՝ պայմանագրի 12-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքների մատակարարման վերջնաժամկետը երկարաձգելով 30 օրացուցային օրով:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, աշխատանքների հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ | Կ Ա Տ Ա Ր Ո Ղ |
|---|---|
| ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br>Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3 Կառավարական տուն 2,<br>ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն<br>Բ/Հ՝ 900011061125<br>ՀՎՀՀ՝ 02698732 | «ԲԻ ԹՈՒ ՋԻ» ՍՊԸ<br>Հասցեն՝ ք. Երևան, Նալբանդյան 5<br>Բանկ՝ Ամերիա բանկ<br>Հ/Հ՝ 1570094113470100<br>ՀՎՀՀ՝ 05032652 |
| Գլխավոր քարտուղար՝<br>---------------- Հ. Հակոբյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. | Տնօրեն՝<br>---------------- Ն. Սարգսյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. |
| Подписано цифровой подписью: HAKOBYAN HASMIK 5610800161<br>DN: c=AM, st=• • • •,<br>givenName=• • • • • •,<br>serialNumber=5bdc672203a3,<br>cn=HAKOBYAN HASMIK 5610800161<br>Дата: 2026.06.19 10:46:30 +04'00' | Digitally signed by SARGSYAN NAREK 2501870840<br>Date: 2026.06.18 16:20:26 AMT |